ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ԿԵՆԴԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ» ԿԱՐԳԱԽՈՍՈՎ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՊԱԿԻՍՏԱՆ

Նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 2-ը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Կենդանի նամակներ» անունը կրող պատվիրակությունն այցելեց Պակիստան, որի նպատակն էր ԵՀԽ-ի բոլոր Եկեղեցիների աջակցությունը հայտնել Պակիստանի շուրջ 6 միլիոն քրիստոնյաներին, ովքեր ամենօրյա ճնշումների են ենթարկվում իսլամական արմատականների և ծայրահեղականների կողմից: Պատվիրակությունը գլխավորում էր ԵՀԽ-ի Միջհավատքային բաժնի տնօրեն Դր. Շանտա Դրեմավարդանան:

Պատվիրակության անդամները հանդիպեցին Պակիստանի բոլոր քրիստոնեական Եկեղեցիների և հարանվանությունների ներկայացուցիչների, Լահոռ քաղաքի Իսլամ առաջնորդների հետ, մասնակցեցին Պակիստանի Երիցական Եկեղեցու ամենամյա Սինոդին: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին Պակիստանի քրիստոնյաներին հուզող խնդիրների լայն շրջանակ՝ զանազան բռնաճնշումները քրիստոնյաների վրա, հարաբերություններն իսլամ առաջնորդների հետ, քրիստոնեական կրթությանը և դաստիարակությանը, աղքատությանը և ազատ դավանանքին վերաբերող մի շարք հարցեր: Իսլամ առաջնորդների հետ հանդիպումների ժամանակ ևս մեկ անգամ շեշտվեց քրիստոնյա-իսլամ երկխոսության և համագործակցության անհրաժեշտության մասին:

Պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև Պակիստանի Երիցական Եկեղեցու նորընտիր ատենապետ Սամուել եպիսկոպոս Ազարիայի հետ:

«Կենդանի նամակներ» պատվիրակության անդամները եղան Լահոռի «Մարդու իրավունքների գրասենյակում», այցելեցին Մադրասսայի մզկիթ և իսլամական համալսարան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ծրագրին մասնակցում էր Միջեկեղեցական Հարաբերությունների գրասենյակի գործավար-քարտուղար Միքայել սարկավագ Բարսեղյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ